ԲՄԿ ՊՈՒՀ ՌՈՒՍ-ՀԱՅԿԱԿԱՆ (ՍԼԱՎՈՆԱԿԱՆ)
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հաստատում եմ՝

Իրավունքի և
քաղաքականության
Ինստիտուտի տնօրեն
Մ.Ա. Քայաշյան

"12" հոկտեմբերի 2022 թ.

Ինստիտուտ՝ Իրավունքի և քաղաքականության
Ամբիոն՝ Քրեական իրավունքի և քրեական դատավարության իրավունքի

*Հեղինակ՝ Ծաղիկյան Մ. Շ.*

*ԴԱՍԸՆԹԱՑԻ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ*

Դասընթաց՝ Անձի քրեագիտական հետազոտումը որպես տակտիկական ազդեցության օբյեկտ

**Մագիստրոսական ծրագիր՝ 042802.03.7 Կրիմինալիստիկա**

**Դասիչ մասնագիտություն՝ 042802.00.7 Իրավական ուսումնասիրություններ**

ԵՐԵՎԱՆ

**1. Ներածություն.**

Անձի քրեագիտական հետազոտումը որպես տակտիկական ազդեցության օբյեկտ առարկայի անհրաժեշտությունն ուղղակիորեն բխում է դինամիկ զարգացող հասարակական հարաբերությունները հանրորեն վտանգավոր ոտնձություններից պաշնպանելու, հանցագործության դեպքերով արդյունավետ քրեական վարույթ իրականացնելու և հանցագործությունները բացահայտելու խնդիրների լուծումից:

Այն քրեագիտության մեջ առավել կարևոր դերակատարություն ունեցող և ներկայումս գործնական աշխատանքի մեջ մեծապես կիրառվող ճյուղերից է, որի նպատակն է առավելապես արագ, արդյունավետ և լրիվ բացահայտել հանցագործության մանրամասները, ի հայտ բերել հանցագործություն կատարած անձանց և ստացված տեղեկատվությունն օգտագործելով առավելապես արդյունավետ մոտեցում ցուցաբերել դատավարության մասնակիցներից ակնկալվող տեղեկությունները ստանալու գործընթացում՝ այդ կերպ մերկացնելով օբյեկտիվ իրականության մեջ տեղի ունեցած երևույթները:

Առարկայի արդիականությունն ընդգծվում է նաև նրանով, որ կապված կիբերհանցագործությունների, համակարգչային տեխնիկայի օգտագործմամբ կատարված այլ հանցագործությունների, ինչպես նաև տնտեսական հանցագործությունների ոլորտում մշտապես կատարելագործվող և փոփոխվող հանցավորների կողմից կիրառված մեթոդների ու ուղիների, դրանց արդյունքում տուժած անձանց սոցիալական, հոգեբանական և ինտելեկտուալ առանձնահատություններից, նախ և առաջ անհրաժեշտ է կատարել անձի քրեական հետազոտում, առանց որի հնարավոր չէ պատկերացնել նման դեպքերի արդյունավետ քննությունը և հետո միայն ճիշտ տակտիկական մոտեցում ցուցաբերել հավաքված տեղեկություններն առավել արդյունավետ օգտագործելու համար, որն իր մեջ ներառում է ճանաչողական տակտիկական խնդիրների լուծում, դրանց օգտագործման միջոցով ապացույցների ձեռք բերում, ինչպես նաև վարույթի շրջանակներում կատարվելիք գործողությունների պլանավորում ու ընթացքի կառավարում, քննության մասնակիցների միջև համագործակցության արդյունավետության ապահովում:

Նման միջոցառումների կիրառումն օգտակար է ինչպես առանձին քննչական կամ դրանց մաս կազմող որոշակի գործողությունների, այնպես էլ քրեական գործի ընդհանուր քննության արդյունավետության բարձրացման համար:

**2. Դասընթացի նպատակը և խնդիրը.**

Դասընթացի նպատակն է ուսանողների մոտ ձևավորել հանագործությունների բացահայտման և քննության արդյունավետության բարձրացման համար կարևոր նշանակություն ունեցող անձի քրեագիտական հետազոտման ուղիները, տեղեկությունների ստացման հնարավոր աղբյուրները և հավաքագրված տեղեկությունների ճիշտ կիրառման տակտիկական հնարքները:

**2.1 Կրթական վերջնարդյունքները**

Դասընթացի հաջող ավարտին ուսանողները **պետք է.**

**իմանան՝**

- անձի քրեագիտական հետազոտման ուղիներին, տեղեկատվության ձեռք բերման քրեադատավարական ընթացակարգերը, հնարավոր այլ աղբյուրները;

**կարողանան՝**

- իրագործել քրեական գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստական տվյալներ ստանալու նպատակով արդյունավետ քննչական գործողություն կատարելու համար անհրաժեշտ գործիքակազմ և հնարքների ընտրության հմտությունները;

**ունակ լինեն՝**

- ստանալ անհրաժեշտ ապացույցներ՝ առանձին հանցագործությունների քննության ժամանակ անձի քրեագիտական հետազոտության արդյունքում ստացված տեղեկատվության կիրառմամբ:

**2.2. Դասընթացի աշխատատարության բաշխումն ըստ ուսումնական աշխատանքի տեսակների (ակադեմիական ժամերով)**

| Ուսումնական աշխատանքների տեսակները | Ամբողջը, ակ. ժամ. | Բաշխում ըստ կիսամյակների | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | 1 Կիս. | 2 Կիս. | 3 Կիս. | 4 կիս. | 5 Կիս. | 6 Կիս. |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
| **1.Ըստ կիսամյակի ընդհանուր դասընթացի ուսուցման ծանրաբեռնվածությունը** | **108** | **108** | | | | | |
| 1.1. Լսարանային պարապմունքներ: | **18** | **18** | | | | | |
| 1.1.1.Դասախոսություններ | **10** | **10** | | | | | |
| 1.1.2.Սեմինարներ | **8** | **8** | | | | | |
| 1.2. Ինքնուրույն աշխատանք | **90** | **90** | | | | | |
| Ամփոփիչ ստուգում (քննություն, ստուգարք) | **Ստուգարք** | **Ստուգարք** | | | | | |

**2.3.Դասընթացի թեմատիկ պլան**

| Դասընթացի բաժինները և թեմաները | Ընդհանուր (ակ. ժամ) | Դասախոսություններ (ակ. ժամ) | Սեմինար (ակ. ժամ) | Պարապմունքների այլ տեսակներ (ակ. ժամ) |
|---|---|---|---|---|
| **Թեմա 1.** Անձի քրեագիտական հետազոտումը, որպես քրեագիտության տեսության բաղադրիչ<br>**Թեմա 2.** Անձի քրեագիտական հետազոտումը, որպես տակտիական ազդեցության օբյեկտ | **16** | **2** | **2** | **12** |
| **Թեմա 3.** Նախնական քննության ընթացքում անձի քրեագիտական վերլուծության առավելությունները | **15** | **2** | **1** | **12** |
| **Թեմա 4.** Անձի հետազոտման և հարցաքննության նախապատրաստման ոչ ավանդական մոտեցումները | **15** | **2** | **1** | **12** |
| **Թեմա 5.** Հանցանք կատարած անձի հետազոտման առանձնահատկությունները | **14** | **1** | **1** | **12** |

| | | | | |
|---|---|---|---|---|
| **Թեմա 6.** Վկայի և տուժողի հետազոտման առանձնահատկությունները (այդ թվում խոցեի վկայի և տուժողի) | **16** | **1** | **1** | **14** |
| **Թեմա 7.** Անձի փորձագիտական հետազոտության հիմնական ուղղվածությունները | **16** | **1** | **1** | **14** |
| **Թեմա 8.** Քրեական հետապնդում իրականացնող մարմինների կողմից ստացված տեղեկությունների արժանահավատության գնահատումը անձի դրսևորած հոգեբանական ախտանշանների վերլուծությամբ | **16** | **1** | **1** | **14** |
| **Ընդամենը** | **108** | **10** | **8** | **90** |

**3.Դասընթացի բաժինները և թեմաները**

**Թեմա 1. Անձի քրեագիտական հետազոտումը, որպես քրեագիտության տեսության բաղադրիչ:**

Անձի ուսումնասիրության հիմնական ուղղությունները քրեագիտությունում: Անձի ուսումնասիրության առարկան և ծավալը: Տակտիկական նպատակներով անձի ուսումնասիրման մեթոդները: Անձի մասին տակտիկական նշանակություն ունեցող տեղեկություններ ստանալու աղբյուրները:

**Թեմա 2. Անձի քրեագիտական հետազոտումը, որպես տակտիական ազդեցության օբյեկտ:**

Անձը որպես հանցագործության դեմ պայքարի ուսումնասիրության առարկա: Անձի քրեագիտական ուսումնասիրության խնդիրներն ու հասկացությունը: Անձի տվյալների տեղը քրեագիտական տեղեկատվության համակարգում: Տուժողների և նրանց վարքագծի մասին տվյալների ուսումնասիրությունը, կապը հանցագործի վարքագծի ուղղվածության ու շարժառիթները հետ :

**Թեմա 3. Նախնական քննության ընթացքում անձի քրեագիտական վերլուծության առավելությունները:**

Նախաքննության մասնակից անձանց առանձնահատկությունների ուսումնասիրություն: Քննիչի կողմից քննության գործընթացի մասնակիցների անձի որոշ հոգեբանական առանձնահատկությունների (հոգեկան վիճակների, հիվանդությունների հոգեբանական դրսևորումների) քննչական գործողությունների տակտիկայի մշակում և օգտագործում:

**Թեմա 4. Անձի հետազոտման և հարցաքննության նախապատրաստման ոչ ավանդական մոտեցումները:**

Քրեագիտության կողմից մշակված ավանդական և նորարական մեթոդների կիրառումը հարցաքննության ընթացքում: Կախված քննչական գործողության տեսակի բովանդակությունից ՝ հարցաքննությունից, առերեսումից, մարտավարական ծրագրի

մշակում: Հարցաքննությունից առաջ անձի հոգեբանական վիճակի ստուգման անհրաժեշտության մասին:

**Թեմա 5. Հանցանք կատարած անձի հետազոտման առանձնահատկությունները:**

Քրեական գործերի տարբեր կատեգորիաների քննության և դատական քննության ընդհանրացված պրակտիկայի հետազոտում, ինչպես նաև ներքին գործերի մարմինների առանձին հանցագործությունների գծով օպերատիվ-հետախուզական գործունեության արդյունքների ամփոփում այս կամ այն տարածաշրջանում օպերատիվ իրադրության թվաքանակի վերաբերյալ վերլուծություն:

**Թեմա 6. Վկայի և տուժողի հետազոտման առանձնահատկությունները (այդ թվում խոցելի վկայի և տուժողի):**

Վկայի անձի քրեագիտական հետազոտության հիմնահարցերը: Վկաների մասնակցությամբ իրականացվող քննչական գործողությունների մարտավարության մշակում: Դատահոգեբանական փորձաքննության նշանակում գործի համար նշանակություն ունեցող տեղեկատվությունը ճիշտ ընկալելու և վերարտադրելու վկայի ունակությունը պարզելու համար:

**Թեմա 7. Անձի փորձագիտական հետազոտության հիմնական ուղղվածությունները:**

Կրիմինալիստական նշանակություն ունեցող անձի մասին տեղեկությունների բովանդակությունը և սկզբունքները: Անձի փորձագիտական հետազոտության խնդիրները և տեսակները:

**Թեմա 8. Քրեական հետապնդում իրականացնող մարմինների կողմից ստացված տեղեկությունների արժանահավատության գնահատումը անձի դրսևորած հոգեբանական ախտանշանների վերլուծությամբ:**

Քննչական և դատական գործողությունների, օպերատիվ-հետախուզական միջոցառումների հստակեցում: Քրեական հետապնդում իրականացման արդյունքում ստացված անձի վերաբերյալ բոլոր տեղեկությունների վերլուծություն: Հանցանք կատարած սուբյեկտների վերաբերյալ տեղեկատվության հավաքման, գնահատման,

հետազոտման եւ օգտագործման ուղղությամբ քննչական գործողությունների կազմակերպչական, օպերատիվ-հետախուզական և որոնողական միջոցառումների իրականացում:

**4. Գրականության ցանկ**

**Հիմնական գրականություն**


1. ՀՀ օրենքը «Զենքի մասին», ընդունված է Ազգային Ժողովի կողմից 3 հուլիսի 1998 թ.
2. ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք, ընդունվել է Ազգային Ժողովի կողմից 1 հուլիսի 1998 թ.
3. ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք, ընդունվել է Ազգային Ժողովի կողմից 30.06.2021 թ.
4. Օհանյան Լ.Պ. Կրիմինալիստիկա: Բուհական դասագիրք. (2-րդ հրատարակություն՝ փոփոխություններով և լրացումներով).- Եր.- ԵՊՀ հրատ., 2010
5. Ենգիբարյան Վ. Գ. Առանձին քննչական գործողությունների կատարման տակտիկա: Կրիմինալիստիկական տակտիկա | Գիտագործնական ձեռնարկ Երևան, Թասկ ՍՊԸ, 2018, 732 էջ
6. Ենգիբարյան Վ. Գ. Հանցագործությունների քննության մեթոդիկա: Կրիմինալիստիկական մեթոդիկա: | Դասագիրք բուհերի իրավաբանական ֆակուլտետների ուսանողների համար՝ երաշխավորված ՀՀ ԿԳՆ կողմից, Երևան, Թասկ, 2017, 608 էջ
7. Ենգիբարյան Վ. Գ. Հանցագործությունների քննության կազմակերպման քրեադատավարական և կրիմինալիստիկական հիմքերը | Մենագրություն, Երևան, Անտարես, 2016, 256 էջ
8. Չախոյան Ա. Մասնագետի հատուկ գիտելիքների և դրանց կիրառման քրեադատավարական և կրիմինալիստիկական հիմնախնդիրները | ԵՊՀ հրատ., Երևան, 200 էջ:

9. Ենգիբարյան Վ. Գ. Առանձին տեսակի հանցագործությունների քննության մեթոդկիա (Կրիմինալիստիկական մեթոդիկա)| Զեռնարկ, Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2009, 416 էջ
10. «Ժամանակակից գիտական տեխնոլոգիաների և մեթոդների կիրառումը փորձաքննության ոլորտում» Միջազգային գիտաժողովի նյութեր, ԵրևանԾաղկաձոր, 16-17 հունիսի 2015թ./ ՀՀ ԳԱԱ Փորձաքննությունների ազգային բյուրո, խմբ. Խորհուրդ՝ Ա.Ջավադյան և ուրիշ.- Երևան-Ծաղկաձոր, 2015, 245 էջ:
11. Белкин Р.С. Курс криминалистики. В 3 т. Т. 1: Общая теория криминалистики. М.: Юристь, 1997.
12. Белкин Р.С. Курс криминалистики. В 3 т. Т. 2: Частные криминалистические теории. М.: Юристь, 1997.
13. Белкин Р.С. Курс криминалистики. В 3 т. Т. 3: Криминалистические средства, приемы и рекомендации. М.: Юристь, 1997.
14. Варданян, А.В. Дискуссионные вопросы криминалистической тактики в контексте действующего Уголовно-процессуального закона / А.В. Варданян// Современные проблемы отечественной криминалистики и перспективы ее развития: Сборник научных статей по материалам Всероссийской научно-практической конференции (с международным участием), посвященной 20-летию кафедры криминалистики. Ответственный редактор Г.М. Меретуков. - Краснодар: Кубанский государственный аграрный университет имени И.Т. Трубилина. – 2019
15. Варданян, А.В. Субъект преступления и личность преступника как междисциплинарные категории уголовно-правовых наук: вопросы соотношения и интеграции / А.В. Варданян// Криминологический журнал Бай
16. Թումասյան Դ., Ուեյն Յորդաշ: «Խոցելի տուժողների/վկաների և կասկածյալների մասնակցությամբ իրականացվող քննությունը». Եր, 2017

**Լրացուցիչ գրականություն**

1. Дубягин Ю.П., Торбин Ю.Т. Использование данных о внешности человека в раскрытии и расследовании преступлений: Учебное пособие. М., 1979.

2. Антонян Ю.М., Еникеев М.И., Эминов В.Е. Психология преступника и расследование преступлений. М.: Юристь, 1996
3. Бодалев А.А. Восприятие и понимание человека человеком. М.: Изд-во Моск. ун-та, 1982.
4. Глазырин Ф.В. Изучение личности обвиняемого и тактика следственных действий. Свердловск 1973.
5. Бедняков Д.И. Непроцессуальная информация и расследование преступлений. М.: Юридическая литература, 1991.
6. Баев О.Я. Тактика следственных действий. Изд. 2-е. Воронеж: 1995.
7. Грамович Г.И. Тактика использования специальных знаний в раскрытии и расследовании преступлений. Учебное пособие. Минск, 1987.
8. Расследование отдельных видов преступлений. /Под ряд. Баева О.Я. и Филиппова А.Г. М., 1994.
9. Ենգիբարյան Վ.Գ.. Առանձին տեսակի հանցագործությունների քննության մեթոդիկա: Եր.: ԵՊՀ հրատ., 2009,
10. Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին ՀՀ օրենք (ընդունված 22.10.2007)
11. Корухов Ю.Г. Криминалистическая диагностика при расследовании преступлений. М., 1998.